Remove Watermark Wondershare PDFelement

Թեսթ 16

Հովհաննես Թումանյան

Գելը

Շորագյալցի Ավոյի պատմությունից հետո խոսքն ընկավ գիլի ոհմակի (բոլուկի) վրա:

Երկար ձմեռներն ու ապրուստի դժվարությունն են պատճառը, որ **գելերը** ոհմակ են կազմում,- բացատրում էին գյուղացիք:

Ոռնում են, իրար կանչում, հավաքվում, միանում, որ ուժեղ լինեն թե՛ հարձակվելու և թե՛ հարձակման դիմադրելու ժամանակ:

Ամեն մինը մենակ հեշտ կհա□թվի ձմեռն ու կկորչի, քան թե խմբով, և ամեն մինը մենակ չի կարող էն ճանկել, ինչ որ կճանկի խումբը:

Եվ հավաքվում են հիսունով, հարյուրով, մի քանի հարյուրով:

Սարսափելի բան է գիլի ոհմակը, մանավանդ էդ լինում է ձմեռը, գիլի ամենաքաղցած ժամանակը, երբ շատ անգամ գելը քաղցից կատաղում է: Երբ ոհմակով մի տեղ կանգնում են հանգստանալու՝ շրջան են կազմում ու էնպես են վեր թափում, որ իրար երես պահեն, չեն հավատում մեկմեկու: Վախենում են իրար ուտեն: Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են էդպես անում, որ իրար տեսնեն ու հարկավոր դեպքում իսկույն նշան տան իրարու, և իբրև թե բոլորը նայում են իրենց գլխավորին:

Գիլի համար մութը, ճամփի դժվարությունը, հեռավորությունը ոչ մի նշանակություն չունեն:

Գելն էնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեք–չորս օրվա ձիու ճամփա կկտրի: Իսկ գիլի սրատեսության վրա էսպես մի զրույց կա ժողովրդի մեջ:

Ասում են՝ մի անգամ արծիվն ու գելը վեճի բռնվեցին, թե իրենցից ո՛րն է ավելի **սրատես**: Գելն ասավ՝ մի ա□պոտ օր ես սարի գլուխն ելա, ամպի միջով մտիկ արի տեսա՝ հեռու մի դաշտում մի սև ցելի (վարած հողի) մեջ մի ակոսում մի սև գառն է նստած:

Արծիվն էլ թե՝ ես էլ երկնքի երեսն ելա, ներքև մտիկ արի, մի ծխնելույզի միջից տեսա կրակի վրա դրած մի պղինձ՝ խուփը վրեն: Խփան ճեղքիցը նայեցի, տեսա պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սիպտակ մազ:

Էսքան արագավազ ու սրատես գազան է գելը: Եվ էս ամենի հետ միասին՝ շատ խորամանկ:

Նա մինչև լավ չիմանա, որ հարձակումն ապահով է, չի հարձակվիլ: Ուրիշ բան է, եթե սովից խելագար մի գել իրեն կորցրած գցի ափաշկարա վտանգի մեջ. բայց սովորաբար գելը շատ է զգույշ ու խորամանկ:

Մի գյուղացի էսպես պատմություն արավ: Ասում է՝ մի տարի թակարդ էի լարել: Առավոտը վաղ վեր կացա, գնացի տեսա մի գել է ընկել մեջը: Միայն ոտիցն է ընկել, ու ոտը փշրվել է, սատկել է: Վեր կալա թակարդիցը հանեցի, էն կողմը գցեցի: Մինչև գլուխս կախ ես թակարդովն էի եղած, մին էլ տեսնեմ՝ վեր կացավ կաղին տալով փախավ: Հա՛յ, հայ, հա՛յ, էլ ո՞րտեղ, իրեն տվեց անտառը: Դու մի՛ ասիլ անտերը ստամեռնուկ տված է եղել:

Գիլի ոհմակն էլ, ձմեռը ճամփա կտրելիս իրար ետևից է գնում- ծլլաշարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձվածը առաջին է գնում: Եվ սա **երկու** հարմարություն ունի նրանց համար: Մին, որ առաջի գնացողները ձնի մեջ կոպար (շավիղ) են բաց անում, ետևից եկողների համար բաց–պատրաստ ճամփա է լինում, մին էլ՝ որ ոչ ոք չի կարող իմանալ, թե իրենք քանիսն են եղել: Եվ էդ է պատճառը, որ ոչ մի որսկան չի կարող ասել, թե էս ոհմակը, որ **անցել է,** քանի գել է եղել մեջը:

Աստված հեռու տանի, թե ոհմակի աչքովը մի որս ընկավ: Ուրիշ գազան լինի, թե ընտանի կենդանի, իսկույն չորս կողմից շրջապատում են, ու էլ փրկություն չկա: Իսկ կճղակավորներին, հատկապես եղնիկներին ու եղջերուներին, քշում

Remove Watermark Wondershare PDFelement

են դեպի սառած գետերը, սառույցի վրա ճղատում ու վրա թափում կամ քշում են դեպի բար□ր ժայռերը, ժայռերից թռցնում ու իջնում ներքև լափում:

Ոհմակը վտանգավոր է և մարդու համար: Եթե բազմություն չեղավ՝ մի կամ երկու մարդից ոհմակը չի վախենալ, թեկուզ հրացան ունենան: Մինչև անգամ հրացանն ավելի վտանգավոր է: Հրացան արձակես թե չէ, իսկույն կհարձակվեն: Հիմի կասեք՝ հապա ինչի՞ց է վախենում գելը:

Էս մասին գյուղացիք մի քանի պատմություն արին:

1. Տեքստի չորս բառերում տառի փոխարեն վանդակ է դրված, դո՛ւրս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:
   ախպոտ
   երբ
   բարձր
   կհաղթվի
2. Գրի՛ր տրված բառերի հականիշները:
   ա/կարճ երկար
   բ/թույլ ուժեղ
   գ/մոտ հեռու
   դ/ցածր բարձր
3. Ասացվածքների երկու մասերը միացրո՛ւ և գրի՛ր դեմ դիմաց:
   ա/Մինչև ճշմարիտը գա, սուտը աշխարհը կքանդի
   բ/Քեզ համար քնում ես, ուրիշի համար երազ տեսնում
   գ/Մեծին հարգիր, որ մեծանաս
   դ/Լավ բան ասա, որ լավ բան լսես
   որ մեծանաս
   որ լավ բան լսես
   ուրիշի համար երազ տեսնում
   սուտը աշխարհը կքանդի
4. Ի՞նչ է նշանակում տեքստում հանդիպող **ստամեռնուկ** բառը:
   սուտ մեռած
5. Տեքստից դո՛ւրս գրիր հոգնակի թվով գործածված չորս բառ:
   կհարձակվեն
   գյուղացիք
   եղնիկներին
   եղջերուներին
6. Դո՛ւրս գրիր տեքստում ընգծված բառերը՝ դիմացը գրելով, թե որը ի՞նչ խոսքի մաս է:

Wondershare PDFelement

Remove Watermark Wondershare PDFelement

անցել է _____ բայ _____
երկու _____ թվական _____
սրատես _____ ածական _____
գելերը _____ գոյական _____

7. Ո՞րն է տրված նախադասության ենթական:
Շորագյալցի Ավոյի պատմությունից հետո խոսքն ընկավ գիլի ռիմակի (բոլուկի) վրա:
ա/Ավոյի
բ/խոսքն
գ/ռիմակի
դ/գիլի ///

8. Տեքատի ընդգծված պարբերության մեջ քանի՞ նախադասություն կա.
ա/հինգ ///
բ/չորս
գ/վեց
դ/յոթ

9. Այն ի՞նչն է, այն ի՞նչը.
Թև ունի, թռչուն չէ,
Միջատ է, մրջյուն չէ,
Աշխատում է օրնիբուն
Բերքը տալիս է մարդուն:
մեղուն

10. Նախադասություններն ըստ բնույթի լինում են.
ա/երկու տեսակ
բ/հինգ տեսակ ///
գ/երեք տեսակ
դ/չորս տեսակ

11. Ինչո՞ւ են գայլերը ռիմակ կազմում:
որպիսի հեշտ կարողանալ որս անել:

12. Ինչպիսի՞ կենդանի է գայլը(բնութագրի՛ր տեքստի բառերով):
Ոռնում են, իրար կանչում, հավաքվում, միանում, որ ուժեղ լինեն թե՛ հարձակվելու և թե հարձակման դիմադրելու
ժամանակ:

13. Ինչպե՞ս է շարժվում ռիմակը ձմռանը:
Ամեն մինը մենակ հեշտ կիա□թվի ձմեռն ու կկորչի, քան թե խմբով, և ամեն մինը մենակ չի կարող էն ճանկել, ինչ որ
կճանկի խումբը:

Remove Watermark Wondershare PDFelement

14. Ինչո՞ւ է վտանգավոր գայլը մարդու համար:
~~որովետև նրանք խմբով հարձակվում էն մարկանց վրա:~~

15. Ուրիշ ի՞նչ գիտես գայլերի մասին:
~~որ գայլեր վախենումեն են կրակից և օձից~~

Wondershare PDFelement